ՀՀ Արմավիրի մարզի Ոսկեհատ գյուղական
համայնքի ղեկավար Գ. Ներսիսյան

2016 թվականի 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած
աշխատանքների

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ փոխմարզպետ Գագիկ Գաբրիելյանի, համայնքի ավագանու անդամների, գյուղապետարանի, միջնակարգ դպրոցի, բուժ.ամբուլատորիայի աշխատակիցների, մասնագետների և համայնքի 132 բնակիչների.

19.01.2017թ.

1. Ոսկեհատ համայնքի բյուջեն կատարվել է 108,2 -% -ով
   ա) Հողի հարկ -104,2 %-ով
   բ) Գույքահարկ - 122,2 %-ով
   գ)Վարձակալական հ/հ -154,1 %-ով
   դ) սեփական եկամուտներ- 141,8 % -ով

2. 2016 թվականի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 16 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

3. Կատարվել է փողոցների աղբի հավաքում և հեռացում ամիսը 4 անգամ:

4. Մշտական ուշադրության կենտրոնում են եղել մանկապարտեզի երեխաները, որոնք մշտապես ապահովվել են սննդով և ջեռուցմամբ:
   Կատարվել է երեխաներին դպրոց ճանապարհելու հանդես, հանձնվեցին նվերներ, ամանորին կազմակերպվել է հանդես մանկապարտեզի և դպրոցի երեխաների համար, տրվել են նվերներ:

5. տարվա ընթացքում 3 անգամ հրավիրվել են տարբեր մասնագիտությունների բժիշկներ, որոնց կողմից անց է կացվել անվճար բուժ. սպասարկում, տրվել է անվճար ակնոցներ բոլոր կարիքավորներին, որի համար մեր խորին շնորհակալությունը տիկին Լարիսա Մուրադյանին:

6. 2016 թվականի ընթացքում վթարվել են 11 անգամ տարբեր փողոցների խմելու ջրագիծը և 11 փողոցների կոյուղագծերը, որոնք վերանորոգվել են համայնքի ջանքերով:

7. Ժամանակին կատարվել է ցորենի և գարու բերքահավաքը, մթերվել է խաղողը և պտուղը:

8. Մայիսի 9-ին կազմակերպվել է Հայրենական մեծ պատերազմի և Լեռնային Ղարաբաղի պայքարի մասնակիցների մեծարման տոնահանդես և տրվել է նվերներ:

9. Ավագանիների որոշմամբ գյուղի անապահով ընտանիքներին հատկացվել է 5.000.000 դրամի օգնություն:

10. Մասնակցել ենք դպրոցի վերջին զանգի արարողությանը:

11. Ամբողջ ուսումնական տարին Հատկացվել է ուսանողական անվճար ավտոմեքենա ուսանողներին Երևան տանելու համար:

12. Գյուղի եվս 2 փողոցներում անց է կացվել գիշերային լուսավորություն:

13. Բոլոր նորածին երեխաների ընտանիքներին տրվում է միանվագ գումար:

14. 2016 թվականի դրությամբ աշխատավարձի և սոց վճարների պարտքեր չկան:

15. Աջակցություն է ցուցաբերվել միջնակարգ դպրոցին նախակրթարանի դասասենյակ պատրաստելու համար:

16. Փոխվել է մանկապարտեզի տանիքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումների, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ է

1. Լուրջ խնդիր է համայնքի որոշ փողոցների խմելու ջրագծերի հիմնանորոգման հարցը:

2. Առաջնահերթ խնդիր է մանկապարտեզի սանհանգույցների վերանորոգման հարցը:

3. Լուրջ հիմնախնդիր է գյուղի մայր կանալի հիմնանորոգման հարցը:

4. Մնացել է չլուծված բուժ ամբուլատորիայի նոր շենքի կառուցման խնդիրը:

5. Առաջնահերթ խնդիր է համայնքի փողոցների ասֆալտապատման հարցը:

Ոսկեհատ համայնքի
ղեկավար Գ. Ներսիսյան